ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք...

Խոր և խորհրդավոր խոհություններ են խմորվում խորհրդային երկրում։ Դարավերջը հիշեցնում է դարասկիզբը։ Ամենուր՝ անսովոր հուզումներ, միտինգներ, կանգնած և նստած ցույցեր, հացադուլներ, գործադուլներ, դասադուլներ, ազգամիջյան կռիվներ, շրջափակումներ, հրդեհներ, տրանսպորտի և հավատի վիճաբներ...

Մարդիկ տագնապով հարցնում են. «Վերջն ի՞նչ է լինելու...»։ Թվում է, թե ամեն ինչ սարսափելի բարդ է, անհասկանալի, քաոս և լաբիրինթոս։ Իրականում՝ ամեն ինչ պարզ է։ Երկրում առաջին անգամ (այն էլ՝ անապատելի) հնարավորություն տրվեց հրապարակայնության, դեմոկրատիայի, վերակառուցման։ Երկարատև զսպվածությունը միանգամից ժայթքեց։ Հոգիներում և մտքերում տարիներով թաքցրածը հրաբխի պես պայթեց (իսկ ամեն հրաբուխ իր շուրջը քար ու կրակ է թափում, ոչնչացնելով նաև լավ բաներ)։ Ջուրն ամենից շուտ խփում է ամբարտակը բացողին։ Հրապարակայնությունը խփեց նաև կուսակցության։ Խփեց նաև Գորբաչովին։ Վիճակը բարդացավ ամբողջովին։

Եվ, այնուհանդերձ, մարդիկ հավատացին դեմոկրատիային։ Հավատացին արդարությանը։ Հավատացին, որ կենսամակարդակը կբարձրանա։ Ազգային հարցը վերջապես կլուծվի։

Հիմա՝ էլ են հավատում։

Բայց շատերն արդեն չեն հավատում։ Ուրախության հրաբխին հաջորդեց տխրության հրաբուխը։ Կրակին հաջորդեց մուխը։

Հիացածները հիասթափվեցին։

Կենսամակարդակը չբարձրացավ, այլ ցածրացավ։ Արդարությունը չհաղթեց այլ պարտվեց։ Ազգային հարցը չլուծվեց, այլ ավելի խճճվեց։

Վատ բան ստացվեց։

Մեվեց դառը կատակ. «Ժողովուրդը հումորի զգացում չունի՝ դեմոկրատիան ընդունեց լրջորեն...»։

Հավատի երկրաշարժ եղավ։

Մարդիկ խարվեցին։ Առաջիններից մեկը՝ մենք։ Ափսո՞ս։

Այս հազարամիտ աշխարհում հայերս մնացինք միամիտ։ Մինչև հիմա էլ միամտորեն հավատում ենք, թե որևէ մեծ պետություն կփրկի մեզ։ Այնինչ ամեն պետություն իր հոգսերն ունի։

Տարիներ շարունակ մեզ հավատացնելով, թե ամբողջ աշխարհը, բան ու գործ թողած, մեր մասին է մտածում, հավատացինք նաև հրապարակայնություններ։ Ուստի... հրապարակ ելանք։ Բայց շուտով պարզվեց, որ հրապարակայնությունը շատ դեպքերում ընդամենը թատրոն է, ուստի հրապարակը կոչվեց Թատերական։ Ժողովուրդն ազատություն էր ուզում՝ խլված իր գավակին էր ուզում, Արցախ էր ուզում, ուստի հրապարակը կոչվեց նաև Ազատության։ Բայց նա կամաց-կամաց հասկացավ, որ ազատության համար արդարություն է պետք, արդարության համար՝ ազատություն։ Առանց մեկի՝ մյուսը չկա։ Եվ քանի որ արդարություն չկա, ազատությունը շրջափակվեց։ Այն օդից շրջափակեցին ուղղաթիռներով։ Այդ ուղղաթիռները, որ ուղիղ են թռչում, ծուռ քաղաքականության արդյունք էին...

Գնանի վրա ապատությունը ոտնահարվեց զորքերով, դեներով, տանկերով։ Արդարության վրա ամեն տանկ՝ նստեց թանկ։ «Ինչպե՞ս եք համարձակվում...»։ սա էր ոմանց ռեակցիան, որից ռեակցիոն հոտ էր գալիս։ Որոշ ժամանակ անց, երբ արյունահեղություններ և շրջափակումներ եղան, վերակառուցման այդ հակառակորդները գործով ասացին. «Մենք ձեզ լաստացի՞ք՝ Ղարաբաղ մի ուզեք, ահա արդյունքը։ Ի վերջո՝ Սումգայիթի մեղավորն էլ... դո՞ւք եք՝ ինչո՞ւ երկար լեմտածեցիք...»։ Դիտմամբ այնպիսի վիճակի մեջ գցեցին մեզ, որ արդար պահանջից հրաժարվենք։ Բայց կհրաժարվե՞նք...

Այս բոլորը նկարագրելու համար Շեքսպի՞ր է պետք։

Վաղը պատմությունը կդատի այսօրը, ինչպես մենք ենք այսօր դատապարտում երեկը։ Խորհրդային կազմակերպված ժամուն այնպես ներկայացրեց սումգայիթյան կազմակերպված եղեռնը, այնպես գովեց «մարդասեր և հայասեր ադրբեջանցիներին», որ քիչ մնաց շնորհակալություն հայտնենք Սումգայիթի խորհրդային եղեռնի համար...

Իսկ հետո «Զվարթնոց» սարքեցին, որ մոռացվի Սումգայիթը։

Հիշո՞ւմ եք կոմիսար Կատանյանին՝ նրա վրա դիտմամբ մեզքեր բարդեցին, որպեսզի հրաժարվի իր արդար պահանջներից։

Բայց եթե նա մի հոգի էր, ապա մենք ժողովուրդ ենք։

Վա՛ռ եք ճանաչում հայ ժողովրդին, պարոնա՛յք։

Եկեք բա՛ց խոսենք։

Անուշա՝ հենց առաջին օրը մեզ ծայրահեղական անվանելը ծայրահեղականություն էր։ Դա, եթե կուզեք ճիշտն իմանալ, քաղաքական սխալ էր։ Իրավացի հարց է ծագում. ինչո՞ւ մեր իրավացի պահանջը չի հարգվում։ Որովհետև դեռևս իրավական պետություն չենք։ Այսինքն՝ դեռ իրավացի չենք։ Ախր՝ հենց ակզբից ծանր սխալներ և ծանր մեղքեր շատ ենք գործել։ Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո (հեղափոխություն, որ պետք է հոգևո՞ր բարություն լիներ մարդկանց համար) միայն մեկ տարում 300 հազար հոգևորական սպանվեց։ Աշխարհում ուրիշ կուսակցություն նկեղեցիներ չի քանդել։ Լենինգրադ Ֆրունզեն, Մարա Մելիքի պես, հացի հրավիրեց սպիտակգվարդիական սպաներին և մասայաբար սպանեց։ Ինչպես գիտեք՝ մասսայաբար կոտորվեցին նաև կուլակ կոչված խելացի աշխատավորները, մեր երկրի մտավորականության և ռազմական խելոք գլուխները։

Մոսկվան մինչև հիմա չի ճանաչում 15 թվի եղեռնը։

Այսքանից հետո հավատում ենք, թե մեր իրավացի հարցը իրավացի կլուծվի։ Շրջափակման համար դիմում ենք մեղավորի օգնությանը։ Գարեգին Նժդեհը գրել է, որ մենք, ցավոք, իսկույն խանդավառվում ենք, երբ օտարը մեզ խոստումներ է տալիս։ Մեր ուժը թողած, հովանավորներ ենք փնտրում։ Որքա՞ն կարելի է։ Հերթի է՝ մի կասկածելի այլազգի մեր միտինգում գոռա, թե իր ժողովուրդը մեզ հետ է, իսկույն հավատում ենք և ծափահարում։

Միամի՞տ հայեր։

Մոսկովյան նստաշրջանում փակ-գաղտնի քվեարկությամբ բոլորն իրենց ձայնը տվեցին Ջաֆարովին, ոչ թե մեր Բալայանին։ Այնինչ դրանց մի մասը բանավոր մեզ անընդհատ սեր է բացատրում...

Պետության քրիստոնյա այրերը, փոխանակ հավասար վարվեն, ավելի շատ մուսուլմանների հետ են։ Վաղը Ռուսաստանը վայ կրտա իր գլխին, ինչպես 300 տարվա թաթար-մոնղոլական լծի համար։ Ու՞ր են ռուս մտավորականները։ Մի՞թե իրենց վազվզմասին չեն մտածում։ Նշանավոր երկրում՝ անենշան նիշանավորներ ու վեզիրովներն են եղանակ ստեղծում։ Մի՞թե նորից եկել է նազիր-վեզիրների ժամանակը...

Թագուհի՞ն է գլխին դրել թագը...

Ասում են՝ Մոսկվան արդյունքներին չի հավատում։ Իրոք։ Խորհրդային երկրում 70 միլիոն մուսուլմաններ կան (գումարած 55 միլիոն թուրքերը), որոնք իրար լեզու շատ լավ հասկանում են, շատ լավ միասնական են, հեռատես և դիվանագետ։ Իսկ այս երկրում ընդամենը 5 միլիոն հայ է ապրում (այն էլ՝ իրար լեզու հասկանում չենք հասկանում...)։

Ուրեմն՝ ու՞մ անհրավական շահերը պիտի պաշտպանի ոչ իրավական երկիրը, 125 միլիո՞նի, թե՞ 5 միլիոնի։ Պարզ է։ Սան Ստեֆանոյի, Բրեստ-Լիտովսկու, Ալեքսանդրապոլի, Կարսի, Մոսկվայի, Լոզանի պայմանագրերը (և, առհասարակ, ռուս-թուրքական բոլոր պայմանագրերը) ի վնաս հայերի են եղել։ Էլ ի՞նչ ենք ուզում։ Ինչի՞ վրա ենք հույս դրել։ Երկրի ծայրում ընկած, հազիվ մի տոկոս կազմող քարակույտ ենք։ Մենք փաստորեն գազանի բերանի մեջ ենք։ Աշխարհագրական-պատմական - ճակատագրական առումով։ Մենք՝ անգեն, նա՝ զինված։ Նա՝ պաշտպանված, մենք՝ անպաշտպան։ Նա որոշակի քայլեր ունի, իսկ մենք ծրագի՞ր էլ չունենք։ Ոչ էլ... գենք։

Նույնիսկ չունենք ազգային ծրագիր-երգ։

Իրականությունից ելնելով է, որ պիտի սքաղ ծրագիր կազմենք, մեր ուժերը դասավորենք և չարաչարենք։ Հիշենք, որ հայ ենք։ Հիշենք, որ Ադրբեջանի ժողովուրդը խաբված է։ Ազգի գրողը պետք է արդարության և ճշմարտության ձայն լինի, իսկ նրա գրողները խարում են նաև սեփական ժողովրդին։ Խարում են նաև աշխարհին։ Դիտավորյալ մեղքը գցում են «ժողովրդական ճակատի» վրա, այնինչ իրենք են կազմակերպում՝ վերևի հատուկ քելեղրաքով։ Եթե չլիներ վերևի խրախուսանքը, իրենց այսպես նենգ չէր պահի այս ազգը։ Իսկ մենք չէինք հավատում նենգություններին, մեղեով էինք դատում։ Ոչ մի պրովոկացիայի զոհ չգնացինք։ Մինչև հիմա էլ Երևանում լոզունգներ կան «Կենցե խորհրդային ժողովուրդների անխախտ եղբայրությունը»...

Կենցե՞...

Վերջին շրջանում Սուրեն Հարությունյանի սուր ելույթները հարություն են տալիս ազգի միասնության արդար գաղափարին։ Պետք է հիշել, որ խորհրդային երկրում ազգարնակչության թվով մենք ութերորդ տեղն ենք (ոչ թե՝ 80-րդ...)։ Աշխարհի 50 երկրում հայություն կա։ Աշխարհում մենք 8 միլիոն ենք (ոմանք նույնիսկ 10 միլիոն են հաշվում)։ Սփյուռքում 3 հազար հայ միլիոնատեր կա, 50 հազար հայազգի ուսանող, 1000 դպրոց, 400 եկեղեցի, 500 թերթ ու ամսագիր, երեք կուսակցություն, հարյուրավոր հայրենակցական, մարզական և այլ միություններ, բարեգործական ընկերություններ, հարուստ և հզոր բանկեր...

Այս բոլորը մեծ ուժ են։ «Հայկական հարց չկա, դի հայ չկա»,— ժամանակին հրճվում էր Թալեաթը։ Հիմա հայերը շատ կան, բայց ոչ միշտ են միասնականներքին կռիվներ ունեն, շատ հաճախ իրար չեն սիրում։ Թեհրանի «Արաքս» թերթը գայրացել է, որ նա դաշնակցականներին հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներ չեմ համարել։ Նա դաշնակցականներին գայլեր է համարում, մյուսներին՝ գառներ։ Մի՞թե այսօր արժե գրությունը խառնել։ Էլ ի՞նչ միասնություն, էլ ի՞նչ հաղթանակ...

Ցավոք, միասնական չեն նաև մայր հայրենիքում ստեղծված 60 ոչ պաշտոնական կազմակերպությունները։ Ճիշտ է՝ բոլորի նպատակը նույնն է, բայց գործունեության ձևերը նույնը չեն։ Իրար խանգարում են։

Ամեն ոք ուզում է ազգի դրոշակիր լինել։ Դա շատ լավ է, բայց դրոշակ կարող է տանել միայն մեկ հոգի։

Ըստ ամենայնի՝ վերակառուցման թշնամիներն ուզում են կրոնի մեջ քաշեն մեզ։ Թող քաշեն։ Տաք և ծակ այն գլուխները, որ մեր գլխին կռիվ են բերում, կդրկվեն գլխից։ Ինչքան խոնարհվել ենք՝ պարտվել ենք։ Ինչքան կռվել ենք՝ հաղթել ենք։ Հեռուստատեսությամբ կռվի կոչեր են անում՝ «Ձենք տվեք, որ լրիվ մորթենք հայերին, թույլ տվեք, որ մեր եղբայր Թուրքիան մեզ օգնության գա»։ Շրջափակումը պատերազմ է, որի մեղավորներին միջազգային դատ է հասնում։ Սա նորություն չէ։ Վաղը Ադրբեջանը կանգնելու է պատմության դատաստանի առջև։ Սումգայիթը սև խարան է իր ճակատին։ Հայերս ազգամիջյան կռիվ չենք ուզում։ Բայց ո՞վ պիտի կռվի, եթե բոլորս միայն դրոշակը վերցնենք։ Իհարկե՝ կրողներ կան, բայց... առայժմ բեմի և միկրոֆոնի համար։

Ամեն ոք ուզում է միկրոֆոնը վերցնել և ազգին սովորեցնել։

Դրա փայլուն օրինակները մեր միտինգներն ու նստաշրջաններն են, մեր ժողովներն են...

Ցավոք՝ հանրապետության Գերագույն պառլամենտի որոշ նիստերը ոչ թե պառլամենտի, այլ... կոլտնտեսության ժողովներ են հիշեցնում, եթե նույնիսկ կասեի՝ կոլխոզի՝ ժողովներ։ Ոչ մեկը ոչ մեկին չի լսում։ Խոսքը տալիս են, ասենք, որևէ կնոջ, միանգամից միկրոֆոնը խլում են մի քանի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք...

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

«Հանձնյմնեն» ազամարդիկ և խոսում՝, խոսում՝, խոսում՝։ Ամեն մեկն իր դիրքն է քշում։ Կարևորն անկարևորությունից չեն տարբերում։ Ներկա պահին դրսում բացարձակ հրդեհ է, իսկ ներսում ժամերով ներկա-բացակա են անում, ժամանակ կորցնում։ Ա՜խ՝զ, երբեմն քաղաքակիրթ մարդկանց մասին չենք խոսում։ Հոգվածներ կան ժդանովի և նեժդանովայի մասին, բայց՝ ոչ Նժդեհի մասին։ Մեր մարդկանց վնասած Նարիմանովի և այլոց անունների փողոցներ ունենք, իսկ մեր մարդկանց օգնելու մեծ փորձեր արած Զիլիբինի անունով՝ ոչ մի բան։

Հայաստանի երկու խոշոր քաղաքները ռուսական անուն ունեն՝ (ճենինական, Կիրովական։ Մայրաքաղաքի 8 շրջաններից 4—ը ինտերնացիոնալ անուններ ունեն։ Հանրապետությանն 30 հայկական գյուղ ռուսական անուն ունի, Երևանի 105 փողոց՝ ռուսական անվանում (պատկերացնում եք՝ ոչ թե 5, այլ՝ 105)։ Ուրեմն՝ կեցցե՛ «ինտերնացիոնալիստ» հայ մարդը։ Տե՛ղն է։ Իսկ հիմա մեզնից վրեժ են առնում ուրիշի ձեռքով (հիմա ո՞վ է իր ձեռքով վրեժ առնում...)։

Ինչպես տեսնում եք՝ ազգությունը չի ներվում։

Ումից վախենում՝ նրա հետ են լավ։ Ուստի որպեսզի մեզանից «վախենան», պետք է միասնական և ուժեղ լինենք։ Դա է ամենահզոր զենքը։ Դրա համար են խանգարում մեր միասնությանը։ Դրա համար խանգարվեց սփյուռքահայ արվեստի փառատոնը Հայաստանում (երևի նաև այն պատճառով, որ թեկնածուների մեջ շատ էին դաշնակցական կուսակցությանն ներկայացուցիչները...)։

Պետք է շտապ գրել «Հայ մարդկի նամակը աշխարհի մարդկանցներին», կարճ և դիպուկ բացատրել մեր շարժման բնույթը, նպատակը, արդարացիությունը, մեր հանդեպ եղած անարդարությունը, տալ մեզավորի անունը և ազգանունը...

Կան տեսակետներ, թե հակառակ դեպքում, կմտնենք ՄԱԿ-ի արամագրության տակ, բարենպաստ սերտ պայմանագրեր կընդունենք Պարսկաստանի և այլ երկրների հետ։ Այդ նույն Պարսկաստանում 18 միլիոնից ավելի ադրբեջանցի կա...

Մարդ ինչքա՞ն պետք է սահմանափակ լինի, որ հարևանի սահմանը փակի։ Մարդ ինչքա՞ն պետք է հոգեպես փոքր լինի, որ հարևանին փոքր մարդ ուզի։ Մարդ ինչքա՞ն պետք է լկտի լինի, որ ռուսերեն ակնարկ գրի. «Իմ Ղարաբաղ» վերնագրով (Ազան, «Լիտերատուրնի Ադերբայջան»)։ Ա՛ռ քեզ, քոնն է...

Նրանց «ինտերնացիոնալիստ» քարոզությունը պետական հանցանք չի համարում Արցախի բռնի միացումը Ադրբեջանին և այժմ ինքնորոշվելու իրավունքից նրան զրկելը, բայց պետական հանցագործություն է համարում այդ մասին խոսելը։ Մի հարցնող լինի՝ պետություն կա՞, որ մեկ էլ պետական հանցանքի մասին եք խոսում...

Հայաստանը 400 հազար քառ. կմ-ից դարձել է ընդամենը 30 հազար, սա՞ էլ են շատ համարում։ Սա՞ է արդարությունը։ Սա միջազգային հանցագործություն է։ Այսօրվա վերաբերմունքն ավելի։ Հայաստանը ցեղվեց ներքնից (երկրաշարժ)։ Վերևից և կողքից։ Ցեղեցի՛ն...

Հայաստանը քառակի երկրաշարժ տեսավ։ երկրաշարժը, սումգայիթը, փախստականները, շրջափակումը։ Տարվա մեջ երեք օր ունենք։ Հայաստանի գեմ ժամանակին ելել են թաթար-սելջուկները (արևելքից), արաբները (հարավից), հոռմեացիները և բյուզանդացիները (արևմուտքից)։ Հիմա էլ՝ հյուսիսի՞ց։

Ջե՛նք ուզում հավատալ։

Մի՞թե վիթխարի երկիրը դեմ է դուրս գալիս փոքրիկ երկրին։ Ջե՛ որ վազեն այս մասին ավելի ծանր կիսովի, քան՝ ստալինիզմի։

Ասում են՝ ինչու՞ են փոքրացնում այդքան շատ քանդված։ Երանի միայն փոքրացները քանդված լինեին...

Ամրոցը երեի՛ր է քանդվել։

Այսօրվա լավ հառերը քիչ նշանակություն ունեն։ Ստալինի, Բերիայի, Կագանովիչի և այլոց հառերը շատ մարդասիրական և շատ ճիշտ են թվացել։ Բայց չէ՞ որ կարևորը գործն է...

Նաև հի՛շտ է ասված՝ գործ չանելը հիմար գործից լավ է...

Ես շատ եմ վախենում, որ ապագայում այսօրվա մասին գրեն որպես՝ «Ջկայացած վերակառուցման, ժողովրդական հուզումների, երկարատև նստաշրջանների և համաժողովրդական ազգությունյան ժամանակ...»։

Այո, կարևորը գործն է, ոչ թե խոսքը։ Դեղն ու ճարը, ոչ թե ճառը։ Կարևորն արածն է, ոչ թե շարածը։ «Բոլոր ազգերից ամենասարսափելին թույլ զեկավարությունն է» ,—ասել է իմաստունը, «Սարկությունը պատերազմից վատ է»,— ասել է ուրիշը։ Մի՞թե իրավունք ունի երկար խոսելու մի երկրի զեկավարությունն, եթե նա ուղիղ 25 տարի հաց է գնում արտասահմանից, իսկ իր ժողովրդի 87 տոկոսն ազքատ է (այն էլ՝ 70 տարի)։

Ուր արդար պահանջը համարվում է... ծայրահեղականություն։ Որտեղ ինքնորոշման իրավունք են ասում, բայց չեն տալիս, որտեղ ամեն ինչում պետք է կենտրոնի թույլտվությունը, որտեղ դեպի երկինք թռչող տիեզերանավը թռվում է հազար տոննանոց երշիկ, խելոք ազգերին առանձնապես չեն սիրում, որտեղ մաֆիայի դեմ արդար կռվողները, ի վերջո, դառնում են մաֆիայի զոհերը, որտեղ հնարավոր է Ջեռնորիլ, Աֆղանստան, Ուրալ, Բայկալ, Սումգայիթ, որտեղ պետությունը չի վատահում ժողովրդին, ժողովուրդը՝ պետությանը, որտեղ փոխանակ աշխատեն, նստաշրջաններ են անում (մի նստաշրջան՝ մի դարաշրջան...), որտեղ հանրապետությունների միջև այնպիսի տեսնվական կապեր են ըստեղծել, որպեսզի ոչ մեկը չկարողանա մենակ ապրել, որտեղ ուրիշ հանրապետություններ ինքնորոշում են պահանջում, որպեսզի ինչ ուզենան՝ անեն, Դորտեղ ամենամեծ մաֆիան բյուրոկրատական ապարատն է...

Սա մեծ ողբերգություն է ազնիվ մարդկանց համար։

Հասկացեք, նաև ա՛յս պատճառներով է, որ մարդիկ հեռանում են երկրից։ Հասկացեք, նաև մե՛ր պատճառով է, որ միասին չենք։ Դրամաշորթությունը դրամատիզմ է։ Պետք է դատել նրանց, ովքեր կաշառք են վերցնում, բայց պետք է տեղեկություններ գեղակատարել նրանց, ովքեր դրամ են վերցնում փախստականներից, վիրավորներից, հաշմանդամներից, ազքատներից, աղետյալներից...

Աղետյալին չօգնելը ազգային աղետ է, աղետյալից օգտվելը՝ կրկնակի աղետ։ Սեփական ժողովրդին են թալանում։ Սեփական ժողովրդին են գավաճանում։

Էլ ի՞նչ միասնություն։

Դավաճանությունն սկսվում է այն պահից, երբ մարդ սկսում է արդարացնել իր մեղքերը։ Դրանք նաև թույլերն են։ Հավատացեք՝ թույլերը շատ ուժեղ են՝ որպես ազգային վտանգ։ Նրանք թույլով են լցված ամեն տեսակ լավի հանդեպ։ «Ոտից-գլուխ թույլ ես, որովհետև... թույլ ես»,— ժամանակին գրեցի մեկի մասին։ Նույնիսկ «բոլոր ժողովուրդների հանճարեղ հայրը», «երկաթյա կամքի տեր մարդը» ներքուստ նախանձում էր լավերին, ազնիվներին։

Իսկ ի՞նչ ասենք հասարակ թույլերի մասին։

Սովորաբար անգործունյա մարդիկ են շատախոս։

Նկատե՞լ եք, թե ովքեր են շատ խոսում՝ երեխաները, ծերերը և... իմպոտենտները։ Ուժեղ և աշխատող մարդը ժամանակ չունի, նա գործ է անում։

Անգործունյա մարդը ստիպված է բյուրոկրատ դառնալ, որ արդարացնի իր գործ չանելը։ Ուստի նա ատում է գործ անողներին։ Աշխատող և ազնիվ մարդիկ բյուրոկրատի համար թշնամիներ են, որոնց պետք է... ոչնչացնել։

Ահա թե ինչպիսի վտանգ է բյուրոկրատիզմը։

Ամեն կուսակցություն իր խմբի շահերի արտացոլումն է, ուստի ամեն կուսակցություն չի կարող սխալներ չունենալ և բյուրոկրատ չլինել։ Նաև հենց բյուրոկրատիզմն է խանգարում մեր միասնությանը։ Ասում ինչու։

Բյուրոկրատիզմի դեմ մոլի կռվողներից շատերը իշխանությանն հասնելուց հետո դառնում են ավելի մոլի բյուրոկրատներ։ Ընդհանրապես իշխանությունն արդեն բյուրոկրատիզմ է։ Այն խմբելի պես է՝ վատ մարդը դառնում է ավելի վատը։ Ռուսական այբբենարանում «Ջ» տառը վերցրած է, կյանքում՝ առաջինը։ Բյուրոկրատն այնքան նասամբ է, որ երբ անծանոթ մարդուն լավություն ես անում, կարծում է՝ քո ծանոթն է կամ շահ ունես։ Բյուրոկրատը դեմ է գործին, որպեսզի չմատնանցի, իսկ անհաղորդության դեպքում պատասխան չտա։ Հաղորդության դեպքում նա այդ լավ գործը վերագրում է իրեն։ Կա նաև բյուրոկրատ, որ միշտ ասում է՝ «Աչքիս վրա», բայց գործի աչքն է հանում։ Սեփական թերությունները ծածկելու համար՝ ուրիշների թերության մասին է խոսում, սիրով հավատում և սիրով ընդունում է տալիս գրպարտությունը, իսկ ուրիշի լավ գործի մասին չի լսում, ձեռնտու չէ։ Նա միշտ պատրաստ է վրեժի՝ թեկուզ բոլորովին ուրիշ առիթով։

Ճիշտ ասաց ընկերս այսպիսիներից մեկին. «Թե այսօր փող չունեիս, վազը կունենաս, բայց եթե այսօր մարդ չես, վազն էլ չես լինիր։ Նույն մարդուն մոտեցա նաև ես. «Ուրախ եմ, որ դուք հիմա՛ եք զեկավարում։ «Շնորհակալ եմ,— շոյված ասաց նա։ «Այ, եթե 37-ին զեկավար լինեիր, բոլորիս կջնջեիր...» միտքս բացատրեցի նա։ Այդ օրվանից հետս չի խոսում։ Բյուրոկրատ էլ կա՝ հենց պաշտոնից հանում են, հայասեր և հայրենասեր է դառնում։ Իսկ ո՞ւր էր մինչև այդ։ Հենց բյուրոկրատների պատճառով է, որ ազգը շնչելու չէ, բույսը ուտելու չէ, հողը հերկելու չէ, բնակարանն ապրելու չէ։ Նրա պատճառով է, որ աշխարհի կանանց տարվա մեջին բնոր կնունեա է, խորհրդային կանանցը՝ յոթ տոննա։ Բյուրոկրատներն են ստեղծել բոլոր տեսակի հիմար լոզունգները. ասենք՝ «Բերքահավաքը ժամկետից երկու ամիս շուտ» (ինչպե՞ս կարելի է չհասած բերքը հավաքել)։ «Բերքահավաքը սեզոնային գործ է» (ո՞վ չգիտի)։ «Կատարենք և գերակատարենք 27-րդ պատմական համագումարի որոշումները» (ոչ մեկը չգիտի, թե ինչ պատմական որոշումներ են, թեև շեմ հիշում ոչ պատմական որևէ համագումար...)։ «Մեր միկրոշարժիչներն ամենախոշորն են աշխարհում» (էլ ի՞նչ միկրո, եթե խոշոր է...)։ «Երկիրը դարձնենք իրավական» (ուրեմն՝ անիրավ է եղել)։ «Մեր քաղաքը և շրջանը դարձնենք կուլտուրական» (ուրեմն՝ անկուլտուրական են եղել) և այլն և այլն։ Կամ ինչքա՞ն պիտի բոլոր թերթերի ճակատին (բացի... «Ոգեղեր») գրվի «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք կոչը։ Պրոլետար՝ կոչվում է չքավոր։ Գուցե մե՞ր երկրի բանվորների մասին է։ Չգիտե՛մ։ Գուցե։

Քաղաքակիրթ երկրները ծիծաղում են։ Մենք պայքարում ենք, նրանք ապրում են։

Ես լավատես մարդ եմ և հավատում եմ, որ երեի ամեն ինչ լավ կլինի։ Թե թերության՝ մասին ազատ խոսում ենք, կանցնի։

Ցի կարող պատահել, որ սուտը միշտ հաղթի։ Անհնար է։ Ինչ որ լավ է՝ մնայուն է։ Ինչ որ վատ է՝ գնայուն է։

Աստված ամեն մարդու և ամեն ազգի փորձությանն է ենթարկում։ Ով դիմանա, արժանի է ապրելու։ Բայց շատ չէ՞, արդյոք, մեր ազգի փորձությունը։ Մի ազգին շա՞տ չէ այսքանը։

Շա՞տ է։

Եղբայրնե՛ր։ Մենք տեսանք վիշապի տարի, որ մեզ վիշապի պես կերավ։ Տեսանք օձի տարի, որ մեզ թունավորեց։ Մյուս տարին Ձիու տարին է։ Հուսանք, որ արագ կհասնենք մեր ազնիվ նրպատակներին։ Անպայման կհասնենք։

Եթե միասին լինենք։

Հայեր բոլոր երկրների, միացե՛ք...